ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4538-Ա «15» սեպտեմբերի 2026 թ.

ԿԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ Հ.143 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Կարինե Կոստանյանի հետ 2021 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «գ» ենթակետը, ինչպես նաև նրա կողմից ներկայացրած դիմումը՝

1. Կարինե Գարեգինի Կոստանյանին 2026 թվականի սեպտեմբերի 15-ից ազատել «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված աշխատանքային պայմանագիրը և աշխատանքային վերջին օր համարել 2026 թվականի սեպտեմբերի 14-ը:

2. «Երևանի Մ. Խորենացու անվան հ.143 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Ժաննա Հովսոյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ